

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2015թ. I եռամսյակի ընթացքում պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների, քաղաքային համայնքների, դրանց ենթակայության տակ գտնվող պատվիրատուների, հանրային կազմակերպությունների կողմից կատարված գնումների վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ

-2015-

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի I մասի 5-րդ կետով վերապահված գործառույթները, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի 25.12.2012թ. 1169-Ն հրամանի պահանջը՝ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը ներկայացնում է 2015թ. առաջին եռամսյակի գնումների վերլուծությունը:

Վերլուծության մեջ ներառված են «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ տեղեկատվություն ներկայացրած պետական կառավարման մարմինների, քաղաքային համայնքների, ինչպես նաև դրանց ենթակա կազմակերպությունների կողմից ընթացիկ տարվա առաջին եռամսյակի ընթացքում կատարված գնումները: Վերլուծությունը հիմնված է այն տեղեկատվության վրա, որը ներկայացրել են պատվիրատուները: Չնայած կատարված գնումների վերաբերյալ տվյալները ԳԱԿ-ին փոխանցելու պահանջը տարածվում է բոլոր պետական կառավարման մարմինների և քաղաքային համայնքների, դրանց ենթակա պատվիրատուների վրա, այնուհանդերձ ոչ բոլորն են այն պատշաճ կատարում: Ինչպես նախկինում, այնպես էլ հաշվետու ժամանակահատվածում շարունակում են պահպանվել տեղեկատվության ժամանակին եւ պատշաճ տրամադրման հետ կապված խնդիրները:

Սովորություն համաձայն, առանձին քաղաքային համայնքներ այս անգամ եւս տեղեկատվություն ընդհանրապես չեն տրամադրել: Խոսքը վերաբերում է նաև դրանց ենթակա պատվիրատուներին: Մի բան, որից տուժում է ներկայացվող աշխատանքը: Արդյունքում հնարավոր չի լինում ստանալ կատարված գնումների ամբողջական պատկերը: Առավել եւս, որ երբեմն ներկայացված տեղեկատվությունը թերի է եւ ոչ լիարժեք:

Հաշվետու ժամանակահատվածում կատարված գնումների վերաբերյալ տվյալներ են ստացվել միայն 25 քաղաքային համայնքներից: Մնացածը 24-ը չի արձագանքել սահմանված պահանջին և տեղեկատվություն չի ներկայացրել:

Թեև կատարված գնումների վերաբերյալ հաջողվում է տեղեկատվություն ստանալ բոլոր պետական կառավարման մարմիններից և պետական

հիմնարկներից, այնուհանդերձ վերջիններիս դեպքում ևս խնդիրներ են առաջանում դրանց ճշգրտության հետ կապված: Ներկայացված տվյալները ոչ միշտ են լիարժեք և անթերի: Թերեւս դա է պատճառը, որ առանձին պատվիրատուներ եռամսյակից-եռամսյակ դրանք վերանայում են՝ աճի կամ նվազման ուղղությամբ:

ՄԱՍ I

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2015թ. ընթացքում պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների և քաղաքային համայնքների, դրանց ենթակայության տակ գտնվող պատվիրատուների, հանրային կազմակերպությունների կողմից կատարված գնումների վերաբերյալ, ըստ գնման նախահաշվային և կնքված արժեքների

Վերլուծության օբյեկտը - 75 պետական կառավարման մարմիններ և պետական հիմնարկներ, 25 քաղաքային համայնքներ*, դրանց ենթակայության 905 պատվիրատուներ (այդ թվում՝ 436-ը պետական կառավարման մարմինների եւ պետական հիմնարկների, 469-ը՝ քաղաքային համայնքների ենթակայության) և 4 հանրային կազմակերպություն

Վերլուծության ժամանակահատվածը - 01.01.2015-31.03.2015թթ.

Վերլուծության առարկան - Իրականացված գնումները, ըստ գնման նախահաշվային և կնքված արժեքի

Վերլուծության նպատակը - Հաշվետու ժամանակահատվածում կատարված գնումների արդյունավետության ուսումնասիրություն

Նախահաշվային գին**- «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ տեղեկատվություն ներկայացրած 75 պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների, 25 քաղաքային համայնքների, դրանց ենթակայության տակ գործող 905 պատվիրատուների կողմից 2015թ. առաջին եռամսյակի ընթացքում կատարված գնումների և հայտարարված ընթացակարգերի նախահաշվային արժեքը կազմել է ընդհանուր առմամբ շուրջ 193.958,8 մլն դրամ, որից 102.006,1 մլն դրամը՝ ծառայությունների, 65.731,3 մլն դրամը՝ ապրանքների և 26.221,4 մլն դրամը՝ աշխատանքների գծով:

* Տեղեկատվության բացակայության պատճառով ներառված չեն 24 քաղաքային համայնքների և դրանց ենթակա պատվիրատուների կողմից տարվա ընթացքում կատարած գնումների տվյալները:


** Վերլուծության մեջ ներառված տվյալները հիմնված են պատվիրատուների ներկայացրած տեղեկատվության վրա:

Կատարված գնումների 43,63 տոկոսը վերաբերել է ՀՀ կառավարության 10/02/2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 32-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ցանկում ընդգրկված այլ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերմանը: Այդպիսի գնումների նախահաշվային արժեքը կազմել է ավելի քան 84.632,0 մլն դրամ: Գումարի հիմնական մասը՝ շուրջ 81.575,3 մլն դրամը, ուղղվել է ծառայությունների ձեռքբերմանը: Աշխատանքների կատարմանը հատկացվել է 557,3 մլն դրամ, ապրանքների մատակարարմանը՝ 2.499,4 մլն դրամ: Այս խմբի գնումների գերակշիռ մասն իրականացրել են պետական կառավարման մարմինները և պետական հիմնարկները: Գումարը հասնում է 78.484,9 մլն դրամի:

Գնման մյուս բոլոր ձևերով հաշվետու ժամանակահատվածում տեղակատվություն ներկայացրած պետական կառավարման մարմինները, պետական հիմնարկները, քաղաքային համայնքները, դրանց ենթակայության տակ գործող պատվիրատուները հայտարարել են ավելի քան 109.326,8 մլն դրամ նախահաշվային արժեքով ընթացակարգեր, որից 20.430,7 մլն դրամը՝ ծառայությունների, 63.232,0 մլն դրամը՝ ապրանքների և 25.664,1 մլն դրամը՝ աշխատանքների գծով (**Գծապատկեր 1**):

Գծապատկեր 1

2014թ. I եռամսյակում հայտարարված ընթացակարգերը ըստ նախահաշվային արժեքների



- 1 Աշխատանք
- 2 Ապրանք
- 3 Ծառայություն

2015թ. առաջին եռամսյակի ընթացքում կատարած գնումների վերաբերյալ հանրային կազմակերպություններից տեղեկատվություն են ներկայացրել չորս ընկերություն՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն, «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ն, «Տրանսգազ» ՍՊԸ-ն և «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ն: Վերջինիս տվյալներն ամբողջական չեն, ինչի թույլ չի տալիս լիարժեք գնահատել դրանք:

Ինչ վերաբերում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին, «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ին և «Տրանսգազ» ՍՊԸ-ին, ապա տրամադրված տեղեկատվության համաձայն, դրանք հաշվետու ժամանակահատվածում կազմակերպել են ընդհանուր առմամբ ավելի քան 6.110,1 մլն դրամ նախահաշվային արժեքով ընթացակարգեր: Ամենամեծ բաղադրիչը եղել է ապրանքների գծով: Նման ընթացակարգերի նախահաշվային արժեքը հասնում է 3.396,5 մլն դրամի:

Հանրային կազմակերպություններից առաջին եռամսյակում շուրջ 5.378,2 մլն դրամ նախահաշվային արժեքով ընթարակարգեր է կազմակերպել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն: Ավելի քան 3.005,5 մլն դրամը վերաբերել է ապրանքների ձեռքբերմանը: Ծառայությունների նախահաշվային գինը 1.518,1 մլն դրամի սահմաններում է:

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի դեպքում հայտարարված գնումների նախահաշվային գինը եղել է 443,5 մլն դրամ, «Տրանսգազ» ՍՊԸ-ինը՝ 288,4 մլն դրամ:

Կազմակերպված 6.110,1 մլն դրամ նախահաշվային արժեքով ընթացակարգերի շրջանակներում հանրային կազմակերպությունները կնքել են 2.973,7 մլն դրամի պայմանագրեր: Ապահովվել է 84,2 մլն դրամի խնայողություն:

Հաշվետու ժամանակահատվածում, համաձայն ԳԱԿ-ին տրամադրված տեղեկատվության, պետական կառավարման մարմինները և պետական հիմնարկները գնման տարբեր ձևերով հայտարարել են 84.022,6 մլն դրամ նախահաշվային արժեքով ընթացակարգեր, անցած տարվա շուրջ 75.440,2 մլն

դրամի դիմաց: Քաղաքային համայնքների դեպքում այն հասնում է 15.362,6 մլն դրամի (**Գծապատկեր 2**): Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակա պատվիրատուների հայտարարած ընթացակարգերի նախահաշվային արժեքը կազմել է ավելի քան 8.496,3 մլն դրամ, համայնքներինը՝ 1.445,3 մլն դրամ:

Պետական կառավարման մարմիններին և պետական հիմնարկներին բաժին է ընկել գնման տարբեր ձևերով հայտարարված ընթացակարգերի նախահաշվային արժեքի ավելի քան 76,85 տոկոսը: Քաղաքային համայնքների կազմակերպած ընթացակարգերի տեսակարար կշիռը կազմել է 14,05 տոկոս:

Պատվիրատուներից ստացված տեղեկատվության համաձայն, պետական կառավարման մարմինները և պետական հիմնարկները 2015թ. առաջին եռամսյակում կազմակերպել են շուրջ 52.929,8 մլն դրամ նախահաշվային արժեքով ապրանքի ձեռքբերման ընթացակարգեր, ինչը 14.947,3 մլն դրամով ավել է եղել 2014թ. նույն ժամանակահատվածի համեմատ:

Աշխատանքների գնման նպատակով հաշվետու ժամանակահատվածում հայտարարված ընթացակարգերի նախահաշվային արժեքը կազմել է 14.811,1 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ այն նվազել է 2.920,8 մլն դրամով: Ծառայությունների ձեռքբերման համար հայտարարված ընթացակարգերի նախահաշվային գինը 2015թ. առաջին եռամսյակում հասնում է 16.281,7 մլն դրամի, 2014թ.՝ 19.725,7 մլն դրամի դիմաց:


Հաշվետու ժամանակահատվածում «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին տեղեկատվություն ներկայացրած 25 քաղաքային համայնքների իրականացրած ընթացակարգերի նախահաշվային արժեքը կազմել է 15.362,6 մլն դրամ: Հիմնական մասը՝ շուրջ 10.607,2 մլն դրամը, վերաբերել է աշխատանքների կատարման համար հայտարարված ընթացակարգերին: Հաշվետվության մեջ ընդգրկված քաղաքային համայնքներն իրականացրել են 2.423,5 մլն դրամ նախահաշվային արժեքով ապրանքների գնման և 2.331,9 մլն դրամ նախահաշվային արժեքով ծառայությունների ձեռքբերման ընթացակարգեր:

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակա 436 պատվիրատուների կազմակերպած ընթացակարգերի գումարը 2015թ. առաջին եռամսյակում գերազանցել է 8.496,3 մլն դրամը: Հիմնական մասն ուղղվել է ապրանքների ձեռքբերմանը: Այդ նպատակով հայտարարված ընթացակարգերի նախահաշվային արժեքը կազմել է շուրջ 6.625,6 մլն դրամ: Այս խմբի պատվիրատուները հաշվետու տարում ձեռք են բերել 1.650,7 մլն դրամի ծառայություններ և 220,0 մլն դրամի՝ աշխատանքներ:

Տեղեկատվություն ներկայացրած 25 համայնքների 469 ենթակա կազմակերպությունները հաշվետու ժամանակահատվածում հայտարարել են շուրջ 1.445,3 մլն դրամ նախահաշվային արժեքով ընթացակարգեր, որոնց հիմնական մասը վերաբերել է ապրանքների ձեռքբերմանը (**Գծապատկեր 2**): Այդպիսի ընթացակարգերի գումարը գերազանցում է 1.253,0 մլն դրամը: Աշխատանքների գնման ընթացակարգերի նախահաշվային արժեքը կազմել է 25,8 մլն դրամ, ծառայություններինը՝ 166,4 մլն դրամ:

Գծապատկեր 2

2014թ. I եռամսյակում հայտարարված ընթացակարգերը ըստ պատվիրատուների



- 1 Պետական կառավարման մարմիններ և պետական հիմնարկներ
- 2 Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակա պատվիրատուներ
- 3 Քաղաքային համայնքներ
- 4 Քաղաքային համայնքների ենթակա պատվիրատուներ

2015թ. առաջին եռամսյակում կազմակերպված 109.326,8 մլն դրամ նախահաշվային արժեքով ընթացակարգերի գերակշիռ մասն իրականացվել է շրջանակային համաձայնագրերով: Դրանց նախահաշվային արժեքը կազմել է 77.310,3 մլն դրամ: Այդ ընթացակարգին բաժին է ընկել հայտարարված գնումների 70,71 տոկոսը:

Իրականացվել են շուրջ 19.400,0 մլն դրամի բաց և 1.866,5 մլն դրամի պարզեցված ընթացակարգեր: 8.927,3 մլն դրամ է կազմել բանակցային ընթացակարգ առանց հայտարարելով և 1.822,7 մլն դրամ՝ բանակցային ընթացակարգեր հայտարարելով գնման ձևերով կազմակերպված ընթացակարգերի նախահաշվային արժեքները: Հաշվետու ժամանակահատվածում գնման մյուս ձևերով տեղեկատվություն ներկայացրած պատվիրատուները ընթացակարգեր չեն իրականացրել:

Առաջին եռամսյակում պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների հայտարարած ընթացակարգերի նախահաշվային արժեքի 78,81 տոկոսը վերաբերել է շրջանակային համաձայնագրերին: Այն հասնում է 66.221,5 մլն դրամի:

Բաց ընթացակարգերի նախահաշվային արժեքը կազմել է 8.742,3 մլն դրամ, իսկ պարզեցվածներինը՝ 321,5 մլն դրամ: Պետական կառավարման մարմինները և պետական հիմնարկները կազմակերպել են նաև 7.487,2 մլն դրամի բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով և 1.259,0 մլն դրամի՝ բանակցային ընթացակարգեր հայտարարելով նախահաշվային արժեքով գնումներ (**Աղյուսակ 1**):

Աղյուսակ 1

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կազմակերպած գնումները ըստ ընթացակարգերի մլն ՀՀ դրամ

Ցուցանիշների անվանումները	Աշխատանք	Ապրանք	Ծառայություն	Ընդամենը
Բաց ընթացակարգեր	5.988,0	2.265,5	488,8	8.742,3
Պարզեցված	64,9	75,4	172,2	312,5

ընթացակարգեր				
Շրջանակային համաձայնագրեր	6.903,9	48.740,0	10.577,6	66.221,5
Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով	1.521,1	980,0	4.986,1	7.487,2
Բանակցային ընթացակարգեր հայտարարելով	333,2	868,9	56,9	1.259,0

Հաշվետու ժամանակահատվածում տեղեկատվություն ներկայացրած 25 քաղաքային համայնքների հայտարարած ընթացակարգերի նախահաշվային արժեքը կազմել է 15.362,6 մլն դրամ, որից շուրջ 10.607,2 մլն դրամը աշխատանքների կատարման, 2.423,5 մլն դրամը՝ ապրանքների մատակարարման և 2.331,9 մլն դրամը՝ ծառայությունների ձեռքբերման գծով: Ի տարբերություն պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների, քաղաքային համայնքների կազմակերպած գնումներում գերակշռել են բաց ընթացակարգերը: Վերջիններիս գնման հայտարարությունների 63,13 տոկոսը, ըստ նախահաշվային արժեքի, բաց ընթացակարգերն են: Դրանք հաշվետու ժամանակահատվածում կազմել է 9.698,6 մլն դրամ (**Աղյուսակ 2**):

Շրջանակային համաձայնագրերով հայտարարվել է 3.665,9 մլն դրամ նախահաշվային արժեքով ընթացակարգ: Այն կազմել է հայտարարված ընթացակարգերի 23,86 տոկոսը:

Պարզեցված ընթացակարգերի նախահաշվային արժեքը կազմել է 1.077,1 մլն դրամ: Իրականացվել է 393,6 մլն դրամի բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով և 527,4 մլն դրամի բանակցային ընթացակարգեր հայտարարելով գնում:

Աղյուսակ 2

Քաղաքային համայնքների կազմակերպած գնումները ըստ ընթացակարգերի մին ՀՀ դրամ

Ցուցանիշների անվանումները	Աշխատանք	Ապրանք	Ծառայություն	Ընդամենը
Բաց ընթացակարգեր	8.305,7	313,5	1.079,4	9.698,6
Պարզեցված ընթացակարգեր	315,0	77,6	684,5	1.077,1
Շրջանակային համաձայնագրեր	1.551,6	1.924,0	190,3	3.665,9
Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով	85,9	108,4	199,3	393,6
Բանակցային ընթացակարգեր հայտարարելով	349,0	-	178,4	527,4

Հաշվետու տարվա առաջին եռամսյակի ընթացքում պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակայության տակ գտնվող 436 պատվիրատուներ իրականացրել են 8.496,3 մլն դրամ նախահաշվային արժեքով ընթացակարգեր: Հիմնական մասը եղել է ապրանքների ձեռքբերման գծով: Դրանց նախահաշվային արժեքը կազմել է ընդհանուր առմամբ 6.625,6 մլն դրամ: Աշխատանքների կատարման համար կազմակերպված ընթացակարգերի գումարը հասնում է 220,0 մլն դրամի, ծառայություններինը՝ 1.650,7 մլն դրամի:

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակայության տակ գտնվող պատվիրատուների հայտարարված ընթացակարգերի 75,75 տոկոսը շրջանակային համաձայնագրերն են: Գնման այդ ձևով կազմակերպվել է շուրջ 6.436,5 մլն դրամի ընթացակարգ՝ հիմնականում ապրանքների ձեռքբերման նպատակով: 869,4 մլն դրամ է կազմել բանակցային

ընթացակարգեր հայտարարելով և 36,2 մլն դրամ՝ բանակցային ընթացակարգեր հայտարարելով գնման ձևերով կատարված գնումների նախահաշվային արժեքը: Իրականացվել են 709,5 մլն դրամ նախահաշվային ընթացակարգով բաց ընթացակարգեր: Պարզեցված ընթացակարգերի նախահաշվային արժեքը եղել է 444,7 մլն դրամ (**Աղյուսակ 3**):

Աղյուսակ 3

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակայության տակ գտնվող պատվիրատուների կազմակերպած գնումները ըստ ընթացակարգերի մլն ՀՀ դրամ

Ցուցանիշների անվանումները	Աշխատանք	Ապրանք	Ծառայություն	Ընդամենը
Բաց ընթացակարգեր	-	-	709,5	709,5
Պարզեցված ընթացակարգեր	116,8	108,1	219,8	444,7
Շրջանակային համաձայնագրեր	654,5	6.124,4	246,6	6.436,5
Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով	36,6	385,4	447,4	869,4
Բանակցային ընթացակարգեր հայտարարելով	1,2	7,7	27,3	36,2

2015թ. առաջին եռամսյակում կատարված գնումների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացրած 25 քաղաքային համայնքների ենթակայության տակ գտնվող 469 պատվիրատուների հայտարարած ընթացակարգերի նախահաշվային արժեքը կազմել է 1.445,3 մլն դրամ: Հիմնական մասը եղել է ապրանքների գնման նպատակով՝ 1.253,1 մլն դրամ: Ծառայությունների ձեռքբերման համար կազմակերպված ընթացակարգերի նախահաշվային արժեքը

հասնում է 166,4 մլն դրամի, աշխատանքներինը՝ 25,8 մլն դրամի: Քաղաքային համայնքների ենթակայության տակ գործող պատվիրատուների իրականացրած ընթացակարգերի 68,24 տոկոսը բաժին է ընկել շրջանակային համաձայնագրերին: 2495 մլն դրամ է կազմել բաց ընթացակարգերի նախահաշվային արժեքը:

Կայացած ընթացակարգերը ըստ թվաքանակի – Հաշվետու տարվա առաջին եռամսյակում կատարված գնումների վերաբերյալ տվյալներ ներկայացրած պատվիրատուներից ստացված տեղեկատվության համաձայն, հայտարարվել է ընդհանուր առմամբ 8799 ընթացակարգ, որից 617-ը՝ աշխատանքների կատարման, 4871-ը՝ ապրանքների ձեռքբերման և 3311-ը՝ ծառայությունների մատուցման համար (**Աղյուսակ 4**):

Աղյուսակ 4

Ընթացակարգերի քանակական բնութագիրը

Ցուցանիշների անվանումները	Աշխատանք	Ապրանք	Ծառայություն	Ընդամենը
Կազմակերպված ընթացակարգերի թվաքանակը	617	4871	3311	8799
Չկայացած ընթացակարգերի թվաքանակը	6	112	54	172
Կայացած ընթացակարգերի թվաքանակը	560	4484	3192	8236
Չամփոփված ընթացակարգերի թվաքանակը	51	275	65	391

Պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների, քաղաքային համայնքների և դրանց ենթակա պատվիրատուների գնումներում

գերակշռում են բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով գնման ձևով իրականացված ընթացակարգերը: Դրանց թիվը հասնում 5086-ի: Երկրորդ մեծ խումբը շրջանակային համաձայնագրեր են՝ 2731: Հաշվետու ժամանակահատվածում հայտարարվել են 181 բաց և 209 պարզեցված ընթացակարգեր: Բանակցային ընթացակարգեր հայտարարելով գնման ձևով կազմակերպվել է 29 ընթացակարգ:

Տվյալների ներկայացման պահին ամփոփվել և կայացած է հայտարարվել 8236 ընթացակարգ (**Աղյուսակ 5**): Չի կայացել 172-ը: Եվս 391-ը գտնվել է ընթացքում:

Աղյուսակ 5

Ամփոփված և կայացած ընթացակարգերի թվաքանակը ըստ գնման ձևի

Ցուցանիշների անվանումները	Աշխատանք	Ապրանք	Ծառայություն	Ընդամենը
Բաց ընթացակարգեր	98	23	60	181
Շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգեր	174	2135	422	2731
Պարզեցված ընթացակարգեր	59	29	121	209
Բանակցային ընթացակարգեր հայտարարելով	8	11	10	29
Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու	221	2286	2579	5086

Պետական կառավարման մարմինները և պետական հիմնարկները 2015թ. առաջին եռամսյակում կազմակերպել են ընդհանուր առմամբ 1797 ընթացակարգ, նախորդ տարվա 1492-ի դիմաց: Հայտարարված ընթացակարգերից 189-ը վերաբերել է աշխատանքների կատարմանը, 761-ը՝ ապրանքների ձեռքբերմանը և 847-ը՝ ծառայությունների մատուցմանը: Չկայացած է հայտարարվել 31 ընթացակարգ: Տվյալների ներկայացման պահին 162-ը գտնվել է ընթացքում: Կայացած ընթացակարգերի թիվը եղել է 1604: Այն համարժեք է հայտարարվածների 89,25 տոկոսին:

Կազմակերպված ընթացակարգերի 57,42 տոկոսը շրջանակային համաձայնագրերն են: Հայտարարվել է 666 բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով գնում: Պետական կառավարման մարմինները և պետական հիմնարկները առաջին եռամսյակում իրականացրել են նաեւ 39 բաց և 49 պարզեցված ընթացակարգեր: Բանակցային ընթացակարգեր հայտարարելով գնման ձևով հայտարարվել է 11 ընթացակարգ:

Տեղեկատվություն ներկայացրած 25 քաղաքային համայնքներ հաշվետու ժամանակահատվածում կազմակերպել են 994 ընթացակարգ, որից 208-ը՝ աշխատանքների կատարման, 388-ը՝ ապրանքների մատակարարման և 398-ը՝ ծառայությունների մատուցման նպատակով: Հայտարարված ընթացակարգերի գրեթե կեսը՝ 477-ը, եղել է բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով գնման ձևով: Իրականացվել է 196 շրջանակային համաձայնագիր: Բաց ընթացակարգերի թիվը 185 է, պարզեցվածներինը՝ 128: Քաղաքային համայնքների հայտարարված ընթացակարգերից չի կայացել 68-ը կամ 6,84 տոկոսը: Տվյալների ստացման պահին 65 ընթացակարգ դեռևս ամփոփված չի եղել: Կայացած է համարվել 861 ընթացակարգ:

Տեղակատվություն տրամադրած պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների և քաղաքային համայնքների ենթակա պատվիրատուները, ըստ ներկայացված տվյալների, իրականացրել են ընդհանուր առմամբ 6008 ընթացակարգ, որից 4433-ը՝ պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների, իսկ 1575-ը՝ քաղաքային համայնքների ենթակա

պատվիրատուները: Չկայացած է հայտարարվել 73-ը: Մեծ մասը՝ 66-ը, պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակա պատվիրատուների իրականացրած ընթացակարգերն են: Կայացած է հայտարարվել 5771-ը:

Չկայացած ընթացակարգերը ըստ թվաքանակի - Հաշվետու ժամանակահատվածում տեղեկատվություն ներկայացրած պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների, քաղաքային համայնքների և դրանց ենթակայության տակ գտնվող պատվիրատուների կողմից հայտարարված ընթացակարգերից ամփոփվել է 8408-ը, որոնցից 313-ը չի կայացել (**Աղյուսակ 6**): Չկայացածները կազմել են ամփոփված ընթացակարգերի 2,04 տոկոսը:

Չկայացած ընթացակարգերի նախահաշվային արժեքը եղել է 1.006,5 մլն դրամ, որից 792,5 մլն դրամը վերաբերել է ապրանքների ձեռքբերմանը: Աշխատանքների դեպքում չեն կայացրել 21,9 մլն դրամի և ծառայությունների դեպքում՝ 192,1 մլն դրամի ընթացակարգեր:

Չկայացած ընթացակարգերի մեջ գերակշռում են շրջանակային համաձայնագրին: Առավել հաճախ չեն կայացել ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ընթացակարգերը՝ 132-ից 107-ը:

Հայտարարված 262 պարզեցված ընթացակարգերից տվյալների ներկայացման պահին ամփոփված է եղել 238-ը, որից կայացել է 209-ը, չի կայացել՝ 29-ը: Չկայացածները կազմել են ամփոփվածների 12,18 տոկոսը: Ընթացքում է եղել 24 ընթացակարգ:

Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով գնման ձևով չկայացած է հայտարարվել 11 ընթացակարգ:

Կազմակերպված 231 բաց ընթացակարգերից ամփոփվել է 181-ը: Չկայացած ընթացակարգ չի եղել: Տվյալների ներկայացման պահին 50-ը գտնվել է ընթացքում:

Աղյուսակ 6

Չկայացած ընթացակարգերի թվաքանակը ըստ գնման ձևերի

Ցուցանիշների անվանումները	Աշխատանք	Ապրանք	Ծառայություն	Ընդամենը
Բաց ընթացակարգեր	-	-	-	-
Շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգեր	2	107	23	132
Պարզեցված ընթացակարգեր	3	3	23	29
Բանակցային ընթացակարգեր հայտարարելով	-	-	-	-
Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու	1	2	8	11

Պետական կառավարման մարմինները և պետական հիմնարկները հաշվետու ժամանակահատվածում իրականացրել են 1797 ընթացակարգ, որից ամփոփվել է 1635-ը: Չկայացած է հայտարարվել 31-ը. 2-ը եղել է աշխատանքների կատարման, 10-ը՝ ապրանքների մատակարարման և 19-ը՝ ծառայությունների ձեռքբերման դեպքում: Չկայացածները կազմում են ամփոփված ընթացակարգերի 1,89 տոկոսը, նախորդ տարվա 3,61 տոկոսի դիմաց:

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կողմից հայտարարված և չկայացած ընթացակարգերի գերակշիռ մասը բաժին է ընկել շրջանակային համաձայնագրերով կատարվող գնումներին՝ 31-ից 28-ը: Ամփոփված 902 շրջանակային համաձայնագրերից չի կայացել 3,10 տոկոսը:


Ընթացիկ տարվա առաջին եռամսյակում պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների չկայացած հայտարարված գնումներից 3-ը

վերաբերել է պարզեցված ընթացակարգերին: Այլ ընթացակարգերով այդպիսիք չեն եղել:

Կնքված պայմանագրեր – 2015թ. առաջին եռամսյակում տեղեկատվություն ներկայացրած պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների, քաղաքային համայնքների և դրանց ենթակայության տակ գտնվող պատվիրատուների կողմից հայտարարված 109.326,8 մլն դրամ նախահաշվային արժեքով գնումների դիմաց կնքվել է 83.116,1 մլն դրամի պայմանագիր, որից 18.335,6 մլն դրամը՝ աշխատանքների կատարման, 50.218,3 մլն դրամը՝ ապրանքների մատակարարման և 14.562,2 մլն դրամը՝ ծառայությունների մատուցման գծով (**Գծապատկեր 3**): Տվյալների ստացման պահին դեռևս չամփոփված գնումների նախահաշվային արժեքը կազմել է 11.251,0 մլն դրամ:

Գծապատկեր 3

2014թ. I եռամսյակում կնքված պայմանագրերը ըստ ապրանք, աշխատանք, ծառայության




- 1 Ապրանք
- 2 Ծառայություն
- 3 Աշխատանք

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների հայտարարած 84.022,6 մլն դրամ նախահաշվային արժեքով գնումների շրջանակներում կնքված պայմանագրերի գինը կազմել է 64.817,9 մլն դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 65.073,1 մլն դրամի դիմաց: Տեղեկատվություն ներկայացրած 25 քաղաքային համայնքները կնքել են շուրջ 10.313,6 մլն դրամի պայմանագիր: Պետական կառավարման մարմինների և

պետական հիմնարկների ենթակա պատվիրատուները ձեռք են բերել 6.711,8 մլն դրամի, քաղաքային համայնքների ենթակաները՝ 1.272,7 մլն դրամի պայմանագրեր **(Գծապատկեր 4)**:

Գծապատկեր 4

2014թ. I եռամսյակում կնքված պայմանագրերը ըստ պատվիրատուների



- 1 Պետական կառավարման մարմիններ և պետական հիմնարկներ
- 2 Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակա պատվիրատուներ
- 3 Քաղաքային համայնքներ
- 4 Քաղաքային համայնքների ենթակա պատվիրատուներ

Պետական կառավարման մարմինները և պետական հիմնարկները հաշվետու ժամանակահատվածում կնքել են ապրանքների գնման 43.246,6 մլն դրամի, աշխատանքների կատարման՝ 10.531,8 մլն դրամի և ծառայությունների ձեռքբերման՝ 11.039,5 մլն դրամի պայմանագրեր **(Աղյուսակ 7)**: Եթե ապրանքների ձեռքբերման պայմանագրերը 2014թ. համեմատ ավելացել են, ապա աշխատանքներինը և ծառայություններինը՝ նվազել:

Այս տարվա առաջին եռամսյակում կնքված պայմանագրերի գերակշիռ մասը վերաբերել է շրջանակային համաձայնագրերին: Այդպիսի պայմանագրերի գինը կազմել է ավելի քան 52.722,0 մլն դրամ: Շրջանակային համաձայնագրերին բաժին է ընկել հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կողմից կնքված պայմանագրերի 81,33 տոկոսը: Գնման այդ

ձևով կնքվել են շուրջ 40.203,5 մլն դրամի ապրանքների մատակարարման, 6.795,9 մլն դրամի՝ աշխատանքների կատարման և 5.722,6 մլն դրամի՝ ծառայությունների մատուցման պայմանագրեր: Շրջանակային համաձայնագրերով կնքված պայմանագրերի գումարը նախորդ տարվա համեմատ ավելացել է 13.218,7 մլն դրամով: Դա արձանագրվել է հիմնականում ապրանքների մատակարարման նպատակով կնքված պայմանագրերի դեպքում:

Հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման մարմինները և պետական հիմնարկները պարզեցված ընթացակարգով կազմակերպված գնումների շրջանակներում ձեռք են բերել 219,6 մլն դրամի պայմանագիր, որից 34,4 մլն դրամը աշխատանքների կատարման, 74,8 մլն դրամը՝ ապրանքների մատակարարման և 110,4 մլն դրամը՝ ծառայությունների մատուցման գծով: 2014թ. համեմատ ավելացել են նաեւ այս ընթացակարգով կատարված գնումները:

Ներկայացված տեղեկատվության համաձայն, բանակցային ընթացակարգ առանց հայտարարելու գնման ձևով կնքված պայմանագրերի գումարը հասնում է 7.249,5 մլն դրամի: Գնման այս ձևով ավելի հաճախ կնքվել են ծառայությունների մատուցման պայմանագրեր: Հաշվետու եռամսյակում դրանք կազմել են 4.758,8 մլն դրամ: Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու գնման ձևով կնքվել են աշխատանքների կատարման գրեթե 1.514,5 մլն դրամի պայմանագրեր: Ապրանքների մատակարարման պայմանագրերի գումարը եղել է 976,2 մլն դրամ: Նախորդ տարվա նկատմամբ այս ընթացակարգով ձեռք բերված պայմանագրերը նվազել են: Համեմատության համար նշենք, որ 2014թ. առաջին եռամսյակում դրանց գումարը կազմել էր շուրջ 20.178,4 մլն դրամ:

Պետական կառավարման մարմինները և պետական հիմնարկները բաց ընթացակարգով հայտարարված 8.742,3 մլն դրամ նախահաշվային արժեքով գնումների շրջանակներում կնքել են 3.406,8 մլն դրամի պայմանագրեր: 5.221,8 մլն դրամի ընթացակարգեր տեղեկատվության ներկայացման պահին գտնվել են ամփոփման փուլում: Բաց ընթացակարգերով կնքված պայմանագրերը նախորդ տարվա համեմատ նվազել են 490,0 մլն դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում բանակցային ընթացակարգեր հայտարարելով գնման ձևով ձեռք է բերվել 1.220,0 մլն դրամի պայմանագիր: Դրանք վերաբերել են մեծամասամբ ապրանքների մատակարարմանը:

Աղյուսակ 7

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կնքած պայմանագրերը ըստ ընթացակարգերի մին ՀՀ դրամ

Ցուցանիշների անվանումները	Աշխատանք	Ապրանք	Ծառայություն	Ընդամենը
Բաց ընթացակարգեր	1.854,6	1.159,5	392,7	3.406,8
Պարզեցված ընթացակարգեր	34,4	74,8	110,4	219,6
Շրջանակային համաձայնագրեր	6.795,9	40.203,5	5.722,6	52.722,0
Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով	1.514,5	976,2	4.758,8	7.249,5
Բանակցային ընթացակարգեր հայտարարելով	332,5	832,6	54,9	1.220,0

Հաշվետու ժամանակահատվածում տեղեկատվություն ներկայացրած 25 քաղաքային համայնքների կողմից հայտարարված ընթացակարգերի շրջանակներում կնքված պայմանագրերի գինը, ըստ ներկայացված տեղեկատվության, կազմել է 10.313,6 մլն դրամ, որից շուրջ 7.598,3 մլն դրամը՝ աշխատանքների կատարման, 865,1 մլն դրամը՝ ապրանքների մատակարարման և 1.850,2 մլն դրամը՝ ծառայությունների ձեռքբերման նպատակով (**Աղյուսակ 8**):

Քաղաքային համայնքները բաց ընթացակարգերի շրջանակներում կնքել են 6.768,6 մլն դրամի պայմանագրեր: Ձեռք բերված պայմանագրերի 65,62 տոկոսը

եղել է այս ընթացակարգով: Գերակշռել են աշխատանքների կատարման նպատակով կատարված գնումները, որոնք կազմել են շուրջ 5.762,4 մլն դրամ:

Ավելի քան 2.130,5 մլն դրամ են կազմել շրջանակային համաձայնագրերը, որից 1.541,6 մլն դրամը աշխատանքների կատարման նպատակով:

Քաղաքային համայնքները հաշվետու ժամանակահատվածում պարզեցված ընթացակարգերով կնքել են 858,2 մլն դրամի պայմանագրեր: Եվս 378,3 մլն դրամ են կազմել բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով և 178,0 մլն դրամ՝ բանակցային ընթացակարգեր հայտարարելով գնման ձևերով կնքած պայմանագրերը:

Աղյուսակ 8

Քաղաքային համայնքների կնքած պայմանագրերը ըստ ընթացակարգերի մլն ՀՀ դրամ

Ցուցանիշների անվանումները	Աշխատանք	Ապրանք	Ծառայություն	Ընդամենը
Բաց ընթացակարգեր	5.762,4	238,6	767,6	6.768,6
Պարզեցված ընթացակարգեր	218,7	75,8	563,7	858,2
Շրջանակային համաձայնագրեր	1.541,6	443,9	145,0	2.130,5
Բանակցային ընթացակարգ առանց հայտարարելով	75,6	106,7	196,0	378,3
Բանակցային ընթացակարգեր հայտարարելով	-	-	178,0	178,0

Տեղեկատվություն ներկայացրած պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակայության տակ գործող 436 պատվիրատուները

8.496,3 մլն դրամ նախահաշվային արժեքով հայտարարությունների շրջանակներում կնքել են շուրջ 6.711,8 մլն դրամի պայմանագրեր (**Աղյուսակ 9**): Դրանց մեծ մասը՝ ավելի քան 5.013,5 մլն դրամը, վերաբերել է ապրանքների ձեռքբերմանը: Ծառայությունների գծով կնքված պայմանագրերի գինը կազմել է 1.517,7 մլն դրամ: Կնքվել է ևս 180,6 մլն դրամ աշխատանքների կատարման պայմանագիր:

Կնքված պայմանագրերի 71,69 տոկոսը վերաբերել է շրջանակային համաձայնագրերով ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերմանը: Դրանց գումարը գերազանցել է 4.811.7 մլն դրամը: Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակայության տակ գործող պատվիրատուները շրջանակային համաձայնագրերով ձեռք են բերել հիմնականում ապրանքներ: Այդպիսի պայմանագրերի գինը հասնում է 4.600,4 մլն դրամի: 797,4 մլն դրամ է կազմել բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով գնման ձևով կնքված պայմանագրերի գումարը: Բաց ընթացակարգերով ձեռք բերված պայմանագրերի գինը եղել է 707,9 մլն դրամ: Դրանք վերաբերել են բացառապես ծառայությունների գնմանը:

Եվս 369,1 մլն դրամ են կազմել պարզեցված ընթացակարգերը: 25,7 մլն դրամի շրջանակներում պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակայության պատվիրատուները պայմանագրեր են կնքել բանակցային ընթացակարգեր հայտարարելով գնման ձևով:

Աղյուսակ 9

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակայության տակ գտնվող պատվիրատուների կնքած պայմանագրերը ըստ ընթացակարգերի մլն ՀՀ դրամ

Ցուցանիշների անվանումները	Աշխատանք	Ապրանք	Ծառայություն	Ընդամենը
Բաց ընթացակարգեր	-	-	707,9	707,9
Պարզեցված	109,8	60,5	198,8	369,1

ընթացակարգեր				
Շրջանակային համաձայնագրեր	37,7	4.600,4	173,6	4.811,7
Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով	31,9	345,6	419,9	797,4
Բանակցային ընթացակարգեր հայտարարելով	1,1	7,0	17,6	25,7

Տեղեկատվություն ներկայացրած համայնքների ենթակայության տակ գործող 469 պատվիրատուները հաշվետու ժամանակահատվածում կնքվել են շուրջ 1.272,7 մլն դրամի պայմանագրեր (**Աղյուսակ 10**): Դրանց մեծ մասը վերաբերել է ապրանքների ձեռքբերմանը: Այդպիսի պայմանագրերի գինը կազմել է 1.093,1 մլն դրամ: Համայնքների ենթակայության տակ գործող պատվիրատուները ապրանքները ձեռք են բերել հիմնականում շրջանակային համաձայնագրերով՝ 849,7 մլն դրամ: Ընդհանուր առմամբ կնքված շրջանակային համաձայնագրերի գումարը հասնում է 913,5 մլն դրամի:

Առաջին եռամսյակում գնման մյուս ձեւերով համայնքների ենթակա պատվիրատուները ձեռք են բերել 157,4 մլն դրամի պայմանագրեր բաց ընթացակարգերով, 27,6 մլն դրամի՝ պարզեցված ընթացակարգերով: 174,2 մլն դրամ են կազմել բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու գնման ձեւով կնքված պայմանագրերը:

Աղյուսակ 10

Քաղաքային համայնքների ենթակայության տակ գտնվող պատվիրատուների կնքած պայմանագրերը ըստ ընթացակարգերի մլն ՀՀ դրամ

Ցուցանիշների անվանումները	Աշխատանք	Ապրանք	Ծառայություն	Ընդամենը
---------------------------	----------	--------	--------------	----------

Բաց ընթացակարգեր	-	157,4	-	157,4
Պարզեցված ընթացակարգեր	6,7	-	20,9	27,6
Շրջանակային համաձայնագրեր	17,3	849,7	46,5	913,5
Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով	0,8	86,0	87,4	174,2

Չկայացած գնումներ –Տեղեկատվություն ներկայացրած պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների, քաղաքային համայնքների, դրանց ենթակա պատվիրատուների կողմից գնման տարբեր ձևերով հայտարարված ընթացակարգերից չի կայացել շուրջ 1.006,5 մլն դրամը (**Աղյուսակ 11**): Չկայացած գնումների հիմնական մասը բաժին է ընկել շրջանակային համաձայնագրերին: Դրանց նախահաշվային արժեքը կազմել է 820,5 մլն դրամ: Չի կայացել 149,5 մլն դրամի պարզեցված ընթացակարգ: Բանակցային ընթացակարգեր հայտարարելով գնման ձևով հաշվետու եռամսյակում չկայացած է հայտարարվել 32,9 մլն դրամի ընթացակարգ: Չի կայացել ընդամենը 3,6 մլն դրամի բանակցային ընթացակարգ առանց հայտարարելով գնում: Բաց ընթացակարգերով չկայացած գնումներ չեն եղել:

Տրամադրված տեղեկատվության համաձայն, հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կազմակերպած գնումներից չկայացած է հայտարարվել 166,9 մլն դրամի ընթացակարգ: Դրանք եղել են հիմնականում շրջանակային համաձայնագրերի շրջանակներում: Այն կազմել է 125,4 մլն դրամ: Չկայացած գնումներից 141,2 մլն դրամը ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ընթացակարգերն են:

Տեղեկատվություն ներկայացրած 25 քաղաքային համայնքների կազմակերպած գնումներից չի կայացել 242,0 մլն դրամի ընթացակարգ, որից 10,9

մլն դրամը աշխատանքների կատարման, 118,5 մլն դրամը՝ ապրանքների մատակարարման և 112,6 մլն դրամը՝ ծառայությունների մատուցման գծով: Դրանք վերաբերել են երկու ընթացակարգերի՝ շրջանակային համաձայնագրերին և պարզեցված ընթացակարգերին: Եթե առաջինի նախահաշվային արժեքը կազմել է 142,6 մլն դրամ, ապա երկրորդինը՝ 99,4 մլն դրամ:

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակայության տակ գործող պատվիրատուների կազմակերպած գնումների շրջանակներում չի կայացել 587,2 մլն դրամի ընթացակարգ: Հիմնական մասը՝ շուրջ 528,4 մլն դրամ, եղել է ապրանքների ձեռքբերման գծով: Չեն կայացել մեծամասամբ շրջանակային համաձայնագրերով կազմակերպված ընթացակարգերը:

Քաղաքային համայնքների ենթակա պատվիրատուների դեպքում հաշվետու ժամանակահատվածում չկայացած է հայտարարվել ընդամենը 10,3 մլն դրամի ընթացակարգ:

Աղյուսակ 11

Չկայացած գնումները ըստ ընթացակարգերի

մլն ՀՀ դրամ

Ցուցանիշների անվանումները	Աշխատանք	Ապրանք	Ծառայություն	Ընդամենը
Բաց ընթացակարգեր	-	-	-	-
Պարզեցված ընթացակարգեր	16,1	16,5	116,9	149,5
Շրջանակային համաձայնագրեր	5,6	741,1	73,8	820,5
Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով	0,3	1,9	1,4	3,6
Բանակցային ընթացակարգեր	-	32,9	-	32,9

հայտարարելով				
--------------	--	--	--	--


Մասնակիցություն- Հաշվետու ժամանակահատվածում կատարված գնումների վերաբերյալ տվյալներ ներկայացրած պետական կառավարման մարմինները, պետական հիմնարկները, քաղաքային համայնքները և դրանց ենթակա պատվիրատուները հայտարարած 8799 ընթացակարգերից ամփոփել են 8408-ը: Ամփոփված ընթացակարգերի մասնակիցների թիվը կազմել է 17151. 1347-ը եղել է աշխատանքների կատարման, 11667-ը՝ ապրանքների մատակարարման և 4137-ը՝ ծառայությունների մատուցման ընթացակարգերի մասնակից: Միջին մասնակցությունը 2,04 է: Մասնակցությունը համեմատաբար բարձր է ապրանքների ձեռքբերման համար հայտարարված ընթացակարգերի դեպքում՝ 2,54 **(Գծապատկեր 5):**

Հայտարարված ընթացակարգերից բարձր մասնակցություն է ապահովվել բաց ընթացակարգերի, շրջանակային համաձայնագրերի դեպքում: Եթե առաջինում միջին մասնակցությունը եղել է 3,86, ապա երկրորդում՝ 3,70: Բաց ընթացակարգերով իրականացված ապրանքների ձեռքբերման ընթացակարգերին միջին մասնակցությունը հասել է ընդհուպ մինչև 5,14-ի: Շրջանակային համաձայնագրերով կատարված այդպիսի գնումների միջին մասնակցությունը եղել է 4,01:

Մասնակցությունը ցածր է պարզեցված ընթացակարգերի, ինչպես նաև բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու գնման ձևով իրականացված գնումների դեպքում: Առաջինում միջին մասնակցությունը հաշվետու եռամսյակում եղել է 1,48, երկրորդում՝ 1,06:

Գծապատկեր 5

Մասնակցության ցուցանիշները ըստ գնման ձևերի



- 1 Բաց ընթացակարգեր
- 2 Շրջանակային
- 3 Պարզեցված ընթացակարգեր
- 4 Սահմանափակ
- 5 Մրցակցային երկխոսություններ
- 6 Բանակցային ընթացակարգեր
- 7 Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու
- 8 Ընդամենը

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կողմից հայտարարված 1797 ընթացակարգերից ամփոփվել է 1635-ը: Ամփոփված ընթացակարգերին մասնակցել է 4034 մատակարար, որից 331-ը՝ աշխատանքների կատարման, 2291-ը՝ ապրանքների մատակարարման և 1412-ը՝ ծառայությունների մատուցման գծով: Միջին մասնակցությունը եղել է 2,47: Նախորդ տարվա համեմատ մասնակցության ցուցանիշը բարելավվել է: 2014թ. նույն ժամանակահատվածում հայտարարված ընթացակարգերի միջին մասնակցություն 1,80 էր:

Ընթացիկ տարի մասնակցությունը համեմատաբար ավելի բարձր է ապրանքների մատակարարման համար կազմակերպված ընթացակարգերում՝ մեկ ընթացակարգին 3,50 մասնակից:

Աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման համար հայտարարված ընթացակարգերի միջին մասնակցությունը եղել է համապատասխանաբար՝ 1,92 և 1,75:

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կազմակերպած շրջանակային համաձայնագրերին հաշվետու ժամանակահատվածում մասնակցել է 3094 մատակարար: Միջինը մեկ ընթացակարգին ներկայացվել է 3,43 հայտ: Շրջանակային համաձայնագրերով պետական կառավարման մարմիններից և պետական հիմնարկներից ամենաբարձր մասնակցությունն ապահովվել է ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության իրականացրած ընթացակարգերում՝ միջին մասնակցությունը եղել է 7,68: Ամփոփված 25 ընթացակարգին, որոնցից 4-ը չի կայացել, մասնակցել է 192 մատակարար: Միջին մասնակցությունը 6,74 է ՀՀ նախագահի աշխատակազմի հայտարարած 19 շրջանակային համաձայնագրերի դեպքում:

Հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման մարմիններից և պետական հիմնարկներից շրջանակային համաձայնագրերով կատարված գնումներին մասնակցության ամենացածր ցուցանիշն արձանագրվել է ՀՀ ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի, ՀՀ գյուղատնտեսության նախարարության, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՊՀ և ՀՀ ԿԱ միջուկային անվտանգության կարգավորման պետական հիմնարկի դեպքում: Այս պատվիրատուների կողմից իրականացված ընդհանուր առմամբ 40 նման ընթացակարգերին ներկայացվել է 1-ական հայտ (**Տեղեկանք 1**): (Տեղեկանքները կցվում են):

Հաշվետու ժամանակահատվածում բաց ընթացակարգ է իրականացրել 8 պետական կառավարման մարմին և պետական հիմնարկ: Ամփոփված բոլոր 18 բաց ընթացակարգերը կայացել են: Դրանց ընդհանուր առմամբ ներկայացվել է 33 հայտ: Միջին մասնակցությունը եղել է 1,83:

Բաց ընթացակարգերին ամենաբարձր մասնակցությունն ապահովվել է ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարության կազմակերպած գնումների ժամանակ: Եթե առաջինն իրականացրել է այդպիսի 1, ապա երկրորդը՝ 6 ընթացակարգ: Մասնակցությունը երկու դեպքում էլ միջինում 3 է:

Բաց ընթացակարգեր հայտարարած 8 պետական կառավարման մարմիններից և պետական հիմնարկներից 5-ի դեպքում միջին մասնակցությունը եղել է 1: Այսպիսի ընթացակարգեր են իրականացրել ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, ՀՀ ԳՆ ԶՏՊԿ «Արփա-Սևան» թունելի վերականգնման ԾԻԳ» ՊՀ-ն, ՀՀ ԿԱ ոստիկանությունը և ՀՀ Արագածոտնի մարզպետարանը (**Տեղեկանք 2**):

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների հայտարարած պարզեցված ընթացակարգերին միջին մասնակցության ցուցանիշը 1,50 է: Հաշվետու ժամանակահատվածում պարզեցված ընթացակարգերին մասնակցությունը բարձր է եղել ՀՀ Ազգային ժողովի կազմակերպած գնումների դեպքում: Հայտարարված նման 1 ընթացակարգին մասնակցել է 4 մատակարար: Միջինը 3 մասնակից են ունեցել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ինչպես նաև ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից իրականացված ընթացակարգերը:

Բազմաթիվ պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների հայտարարած պարզեցված ընթացակարգերին եղել է ընդամենը 1 մասնակից (**Տեղեկանք 3**):

Միջին մասնակցության ցուցանիշը 1,15 է պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների իրականացրած բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով գնման ձևի դեպքում: Կազմակերպվել է 662 այդպիսի ընթացակարգ, որոնց մասնակցել է 760 մատակարար: Այդ եղանակով կատարված գնումներին հիմնականում եղել է մեկ մասնակից: Թեև առանձին

դեպքերում հայտերի թիվը մեկից ավելին է: Մասնավորապես ՀՀ էկոնոմիկայի նախարարության կազմակերպված 4 ընթացակարգին մասնակցել է 13 մատակարար: Միջինը՝ մեկ ընթացակարգին եղել է 3,25 մասնակից: Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելով գնման ձևով ՀՀ քաղաքաշինության նախարարության հայտարարած 4 ընթացակարգերին ներկայացվել է 10 հայտ: Միջին մասնակցությունը՝ 2,50 (**Տեղեկանք 4**):

Բանակցային ընթացակարգեր հայտարարելով գնման ձևով առաջին եռամսյակում գնումներ է կատարել 5 պետական կառավարման մարմին և պետական հիմնարկ: Ամփոփված 11 ընթացակարգերին մասնակցել է 34 մատակարար: Միջին մասնակցությունը հասնում է 3,09-ի:

Այս ձևով կազմակերպված գնումների ժամանակ ամենաբարձր մասնակցությունն ապահովվել է ՀՀ ԿԱ ոստիկանությունը. Իրականացված 1 ընթացակարգին ներկայացվել է 10 հայտ: Երեք պատվիրատուների կողմից հայտարարած այդպիսի ընթացակարգերին մասնակցել է մեկական մատակարար (**Տեղեկանք 5**):

Տեղեկատվություն ներկայացրած 25 քաղաքային համայնքների իրականացրած 994 ընթացակարգերից ամփոփվել է 929-ը: Դրանց մասնակցել է 2342 մատակարար: Միջին մասնակցությունը 2,52 է: Ցածր է հատկապես ծառայությունների ձեռքբերման ընթացակարգերի մասնակցությունը՝ միջինը 1,27 հայտ: Աշխատանքների կատարման նպատակով կազմակերպված ընթացակարգերի դեպքում միջին մասնակցությունը կազմել է 3,78, ապրանքների մանտակարարման դեպքում՝ 3,19: Բարձր է շրջանակային համաձայնագրերի՝ 5,56 և բաց ընթացակարգերի՝ 4,06, մասնակցությունը:

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակայության տակ գործող պատվիրատուների կազմակերպած ընթացակարգերի միջին մասնակցությունը 1,35 է: Առավելապես ցածր է մասնակցությունը ծառայությունների գնման ընթացակարգերում՝ 1,06:

Տեղեկատվություն ներկայացրած քաղաքային համայնքների ենթակայության տակ գտնվող պատվիրատուների մոտ մասնակցությունը հաշվետու ժամանակահատվածում եղել է միջինը 3,19: Ինչպես պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակա պատվիրատուների կազմակերպած գնումների ժամանակ, այնպես էլ այստեղ ցածր է ծառայությունների ձեռքբերման համար հայտարարված ընթացակարգերի մասնակցությունը՝ 1,17: Քաղաքային համայնքների ենթակա պատվիրատուների իրականացրած ընթացակարգերից մասնակցությունը բարձր է բաց ընթացակարգերի և շրջանակային համաձայնագրերի դեպքում: Եթե առաջինում միջինում ներկայացվել է 5,00 ապա երկրորդում՝ 5,66 հայտ:

Մերժված մասնակիցներ - Հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների, քաղաքային համայնքների, դրանց ենթակա պատվիրատուների կազմակերպած ընթացակարգերին ներկայացված 17151 հայտերից 379-ը կամ 2,20 տոկոսը մերժվել է: Մերժվածների գերակշիռ մասը եղել են ապրանքների մատակարարները: Այդպիսի հայտերի թիվը հասնում է 275-ի: Աշխատանքների կատարարման նպատակով կազմակերպված ընթացակարգերից մերժվել է 21, ծառայությունների մատուցման ընթացակարգերից՝ 83 մասնակից:

Մերժվածները եղել են հիմնականում շրջանակային համաձայնագրերի հայտատուներ: Այս ընթացակարգին մասնակցած 367 մատակարար մերժում է ստացել: Այն կազմել է մերժվածների 96,83 տոկոսը: Մեծ մասը՝ 271-ը, ապրանքների մատակարարման համար ներկայացված հայտերն են: Բաց ընթացակարգերից մերժվել է 3, պարզեցված ընթացակարգերից՝ 9 հայտ:

Հաշվետու ժամանակահատվածում տեղեկատվություն ներկայացրած 25 քաղաքային համայնքները մերժել են 11, քաղաքային համայնքների ենթակա պատվիրատուները՝ 2 հայտ: Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակա պատվիրատուների մերժած հայտերի թիվը եղել է 94:

Մերժված հայտատուներից 270-ը վերաբերել է պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների հայտարարած ընթացակարգերի մասնակիցներին: Դրանք կազմել են մասնակիցների 6,69 տոկոսը: Ավելի հաճախ՝ 270-ից 172-ը, մասնակիցների հայտերը մերժվել են ապրանքների գնման համար հայտարարված ընթացակարգերի դեպքում:

Հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կազմակերպած բաց ընթացակարգերից ամփոփվել և կայացած է հայտարարվել 18-ը: Ներկայացված 33 հայտից 3-ը մերժվել է: Բաց ընթացակարգերի դեպքում մերժում է ստացել մասնակիցների 9,09 տոկոսը:

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կազմակերպած բաց ընթացակարգերից մերժված 3 հայտատուներից 2-ը եղել է ՀՀ պաշտպանության նախարարության իրականացրած ընթացակարգերի մասնակից: Մեկ հայտատուի մերժել է ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը (**Տեղեկանք 6**):

Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ամփոփած և կայացած հայտարարված պարզեցված ընթացակարգերին հայտ է ներկայացրել 63 մասնակից, մերժվել է՝ 3-ը կամ 4,76 տոկոսը: Երկու մասնակցի մերժել է ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը, մեկին՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը (**Տեղեկանք 7**):

Հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների իրականացրած շրջանակային համաձայնագրերին մասնակցել է 3094 հայտատու: Մերժում է ստացել 263-ը կամ 8,50 տոկոսը: Մերժումների ցուցանիշը բարձր է ՀՀ կրթության և գիտության նախարարության կազմակերպած ընթացակարգերում: Այդպիսի 8 ընթացակարգերին ներկայացված 29 հայտերից 15-ը մերժվել է: ՀՀ Ազգային ժողովի դեպքում մերժվածները կազմել են մասնակիցների 36,36 տոկոսը:

Շրջանակային համաձայնագրերով կատարված գնումների ժամանակ բազմաթիվ պատվիրատուներ մերժված մասնակիցներ չեն ունեցել (**Տեղեկանք 8**):

Գնման գործընթացից հրաժարվածներ–Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների, քաղաքային համայնքների, դրանց ենթակա պատվիրատուների կողմից հայտարարված ընթացակարգերին 2015թ. առաջին եռամսյակում մասնակցած 19 հայտատու հրաժարվել է գնման գործընթացի հետագա մասնակցությունից: Դրանցից 14-ը եղել է ապրանքների ձեռքբերման, 2-ը՝ աշխատանքների կատարման և 3-ը՝ ծառայությունների մատուցման համար հայտարարված ընթացակարգերի մասնակից: Մասնակիցները հրաժարվել են բացառապես շրջանակային համաձայնագրերով կազմակերպած ընթացակարգերից:


Գնման գործընթացից հրաժարված մասնակիցներ չեն ունեցել տեղեկատվություն ներկայացրած 25 քաղաքային համայնքները և դրանց ենթակա պատվիրատուները: Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակա պատվիրատուների կազմակերպած ընթացակարգերից հրաժարվել է 2 մասնակից:

Գնման գործընթացներից հրաժարվածներից 17-ը եղել են պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների հայտարարած շրջանակային համաձայնագրերի մասնակից: ՀՀ ՊՆ ամփոփած և կայացած հայտարարված 78 նման ընթացակարգից հրաժարվել է 16, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կազմակերպած 4 ընթացակարգերից՝ 1 մասնակից (**Տեղեկանք 9**):

Հաշվարկային տնտեսում– 2015թ. առաջին եռամսյակում պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների, 25 քաղաքային համայնքների և դրանց ենթակայության տակ գործող 905 պատվիրատուների կատարած գնումների շրջանակներում ձևավորվել է շուրջ 13.953,2 մլն դրամի հաշվարկային տնտեսում, որից 1.747,8 մլն դրամը՝ աշխատանքների կատարման, 7.202,1 մլն դրամը՝ ապրանքների մատակարարման և 5.003,3 մլն դրամը՝ ծառայությունների մատուցման գծով: Հաշվարկային տնտեսումը կազմել է ամփոփված և կայացած գնումների նախահաշվային արժեքի 14,37 տոկոսը(**Գծապատկեր 6**):

